ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 792 - Ա

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ և 4.1-ին մասերով՝

1. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ (այսուհետ՝ միջգերատեսչական աշխատանքային խումբ) «Աջակցություն Հայաստանում և Վրաստանում տնտեսական միջանցքի զարգացմանը՝ Հայաստանի և Վրաստանի միջև առևտրի և մրցունակության բարձրացման, սահմանային անցակետերի արդիականացման և համատեղ հսկողության իրականացման համար» ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև համատեղ օգտագործման ցամաքային մաքսային անցման կետերի պլանավորման, նախագծման, շահագործման և մշտադիտարկման աշխատանքներին աջակցելու նպատակով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) ապահովել հանդիպումներն ըստ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներից բխող անհրաժեշտության.

2) ապահովել համապատասխան ոլորտի մասնագետների կամ ներկայացուցիչ-ների ներգրավումը սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների կատարման գործընթացում՝ ըստ անհրաժեշտության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

12.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ